

ՀՀ Արարատի մարզպետ Է.Բարսեղյանի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային տոնի առթիվ

08.03.2012



Միբելի տիկնայք

Գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ ընդունեք ջերմագույն շնորհավորանքներս : Ցանկանում եմ, որ լինեք երջանիկ՝ շրջապատված լինելով ընտանեկան ջերմությամբ ու սիրով, լինեք գեղանի ու գարնանաբույր՝ ձեր շուրջը սփռելով բարություն և ուրախություն:

Մեր ժողովրդի պատմության էջերում ուրույն է հայ կնոջ դերը ընտանիքում և հասարակության մեջ: Այսօր էլ դուք շարունակում եք ձեր անուրանալի ավանդն ունենալ հայոց օջախների պահպանման, սերունդների հայեցի դաստիարակության, ազգային արժեքների պահպանման գործում: Վստահ եմ, որ կանանց ներկայությունն ու միջամտությունը ամենատարբեր ոլորտներում և հասարակական կյանքում միշտ եղել է և կլինի կարևորագույն հենասյուններից մեկը մեր պետականության կայացման գործում :

Թանկագին մայրեր, սիբելի տիկնայք և աղջիկներ

Կրկին շնորհավորելով միջազգային տոնի կապակցությամբ, ի սրտե մաղթում եմ ձեզ առողջություն, արևշատություն, բարեկեցություն, բազում ժպիտներ և բերկրալի պահեր:

Հարգանքով՝ ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյան